| 24.բ. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) դրոշմակնիքը | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագրի վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ դրոշմակնիքը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա | |
| 24.գ | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության ամսաթիվը, ժամը, ընդամենը | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագրի վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ սույն տվյալները դրվում են թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա | |

Հավելված 6
ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ԱԹ-3 ծածկագրով
 գնանշման հարցման հրավերի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ԱԹ-3

Բ. —

« — » ————— 2024թ.

—————-ը ի դեմս —————-ի, որը գործում է —————-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և —————-ը, ի դեմս տնօրեն —————-ի, որը գործում է —————-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Չնկատելի ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Գատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է _____ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:¹⁵ Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարզևավճարները և ակնկալվող շահույթը:

¹⁵ Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:¹⁶

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:¹⁷

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

¹⁶ Գ ա ն ձ ա պ ե տ ա ր ա ն ո ւ մ հ ա շ ի վ ն ե ր չ ո ւ ն ե ց ո ղ պ ա տ վ ի ր ա տ ո ւ ն ե ր ի դ ե պ թ ո ւ մ ս ո ւ յ ն կ ե տ ի վ ե ր ջ ի ն պ ա ր ք ե ր ո ւ թ յ ո ւ ն ը ի մ ք ա գ ր վ ո ւ մ է հ ե տ ն յ ա լ ք ո վ ա ն դ ա կ ո ւ թ յ ա մ ք . «Ը ն դ ռ ռ ո ւ մ գ ն մ ա ն դ ի մ ա ց վ ճ ար ո ւ մ ն ի ր ա կ ա ն ա ց վ ո ւ մ է ս ո ւ յ ն պ ա յ մ ա ն ա գ ր ի վ ճ ար մ ա ն ժ ա մ ա ն ա կ ա ց ո ւ յ ց ո վ ս ա հ մ ա ն վ ա ծ ժ ա մ կ ե տ ո ւ մ , հ ի ն գ ա շ ի ս ա տ ա ն ք ա յ ի ն օ ր վ ա ը ն թ ա ց ք ո ւ մ »

¹⁷ Ս ո ւ յ ն կ ե տ ը հ ա ն վ ո ւ մ է պ ա յ մ ա ն ա գ ր ի ն ա խ ա գ ծ ի ց , ե թ ե գ ն վ ե լ ի ք ա պ ր ա ն ք ը չ ի հ ա ն դ ի ս ա ն ո ւ մ հ ի մ ն ա կ ա ն մ ի ջ ո ց : Ի ս կ ե թ ե գ ն վ ե լ ի ք ա պ ր ա ն ք ը հ ա ն դ ի ս ա ն ո ւ մ է հ ի մ ն ա կ ա ն մ ի ջ ո ց , ա պ ա ե ր ա շ ի ք ա յ ի ն ժ ա մ կ ե տ ը չ պ ե տ ք է պ ա կ ա ս լ ի ն ի 365 օ ր ա ց ո ւ ց ա յ ի ն օ ր ի ց :

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:¹⁸ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

¹⁸ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնու մտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համար այն ազդեցության գնի նկատմամբ, որի շրջանակում մարձանագրվել է ստանձնված պարտավորությունը: Եթե պայմանագիրը կնքվել է ստանձնված պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձևերը բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:¹⁹

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:²⁰

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

¹⁹ Ս ու լ յ ն կ ե տ ը ի հ ա ն վ ու մ է պ ա յ մ ա ն ա գ Ր ի ց , ե թ ե պ ա յ մ ա ն ա գ Ր ի ը չ ի ի Ր ա կ ա ն ա ց վ ու մ գ ո Ր ծ ա կ ա լ ու թ Յ ա ն պ ա յ մ ա ն ա գ Ր ի կ ն ք ե լ ու մ ի ջ ը ո ճ ո Վ :

²⁰ Ս ու լ յ ն կ ե տ ը ի հ ա ն վ ու մ է պ ա յ մ ա ն ա գ Ր ի ց , ե թ ե պ ա յ մ ա ն ա գ Ր ի ը չ ի ի Ր ա կ ա ն ա ց վ ու մ հ ա մ ա տ ե ղ գ ո Ր ծ ու ն ե ու թ Յ ա ն (կ ո ն ս ո Ր ց ի ու մ ի)պ ա յ մ ա ն ա գ Ր ի կ ն ք ե լ ու մ ի ջ ը ո ճ ո Վ

8.13 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ



/ստորագրություն/
Կ.Տ



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:


ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*



| Ապրանքի | | | | | | | | | | |
|---------|------------|--|-----------------------|----------------|----------------------|-------------------------|------------------|----------------------------|---------------|---|
| չ/հ | (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | էնթակա քանակը | Ժամկետը*** |
| 1 | 39111140/6 | Աթոռ 2 ոտքով | Համաձայն աղյուսակ 1-ի | հատ | | | 25 | Ք. Երևան Նալբանդյան 128 | 25 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում: |
| 2 | 39111140/7 | Աթոռ 4 ոտքով | | հատ | | | 540 | | 540 | |
| 3 | 39138310 | Գրասենյակային բազկաթոռ | | հատ | | | 30 | | 30 | |
| 4 | 39111230 | Գրասենյակային բազկոց իր 2 բազկաթոռներով | | հատ | | | 2 | | 2 | |
| 5 | 39132220 | Կախիչ | | հատ | | | 70 | | 70 | |
| 6 | 39111140/8 | Շարժական աթոռ միջին չափի | | հատ | | | 20 | | 20 | |
| 7 | 39111220 | Բազկաթոռ՝ դեկավարի արմնկակալները՝ փայտից | | հատ | | | 10 | | 10 | |
| 8 | 39111220/1 | Բազկաթոռ՝ դեկավարի | | հատ | | | 5 | | 5 | |
| 9 | 39121400 | Լրագրասեղան | | հատ | | | 3 | | 3 | |



Աղյուսակ 1


| Չ/Հ | Ապրանքի անվանումը | տեխնիկական բնութագիրը | Քանակ (հատ) | Ընդունելի տեսք |
|-----|-------------------|---|-------------|---|
| 1 | Աթոռ 2 ոտքով | <p>Կոնստրուկցիան՝ կարկասը մետաղական, սև ջերմային փոշեներկված մետաղից (օվալաձև), 2 սև ջերմային փոշեներկմամբ ոտքերով: Ոտքերը ստացված 1 միասնական ձողից, որոնց անկյունները ստացված են ոչ թե զողման այլ մետաղի ճկման արդյունքում: Նստատեղը և հենակը փայտանյութից (ֆաներա)՝ բարձրորակ էկոկաշվի երեսպատմամբ: Նստատեղի և հենակի միջուկը (երեսպատման էկոկաշվի) արտաքին կողմից՝ կահույքագործական սպունգ (գուպկա): Նստատեղը և հենակը մետաղական կոնստրուկցիային ամրացված են որպես 1 ամբողջական կտոր: Նստատեղը և հենակը կարերով՝ ուղղանկյուն: Աթոռի դիզայնը, ըստ մատնանշված լուսանկարների: Նստատեղի և հենակի էկոկաշվի գույները սև, սպիտակ, բեժ կանաչ, դեղին, շագանակագույն, մոխրագույն (նշված քանակության մեջ առանձին գույների քանակային չափերը ըստ պատվիրատուի պահանջի) :</p> <p>Աթոռի չափերը.</p> <ul style="list-style-type: none"> - Լայնություն 430 մմ (± 3%) - Խորություն 500 մմ (± 3%) - Բարձրություն 830 մմ (± 3%) - Նստատեղի բարձրությունը հատակից 450 մմ (± 3%) : <p>Աթոռի մաքսիմալ ծանրաբեռնվածությունը՝ 100 կգ:</p> | 25 |  |
| 2 | Աթոռ 4 ոտքով | <p>Կոնստրուկցիան՝ կարկասը մետաղական, սև ջերմային փոշեներկված մետաղից (կլոր), 4 սև ջերմային փոշեներկմամբ ոտքերով: Նստատեղը և հենակը փայտանյութից (ֆաներա)՝ բարձրորակ էկոկաշվի երեսպատմամբ: Նստատեղի և հենակի միջուկը (երեսպատման էկոկաշվի և փայտանյութի արանքում) արտաքին կողմից՝ կահույքագործական սպունգ (գուպկա): Նստատեղը և հենակը մետաղական կոնստրուկցիային ամրացված են որպես 1 ամբողջական կտոր: Նստատեղը և</p> | 540 |  |

| | | | | |
|---|------------------------|--|----|--|
| | | <p>հենակը կարերով՝ քառակուսի: Աթոռի դիզայնը ըստ մատնանշված լուսանկարների: Նստատեղի և հենակի էկոկաշվի գույները սև, սպիտակ, բեժ կանաչ, դեղին, շագանակագույն, մոխրագույն (նշված քանակության և տեսականու մեջ առանձին գույների քանակային չափերը ըստ պատվիրատուի պահանջի):</p> <p>Աթոռի չափերը.</p> <ul style="list-style-type: none"> - Լայնություն 420 մմ ($\pm 3\%$) - Խորություն 380 մմ ($\pm 3\%$) - Բարձրություն 870 մմ ($\pm 3\%$) - Նստատեղի բարձրությունը հատակից 470 ($\pm 3\%$) մմ: <p>Աթոռի մաքսիմալ ծանրաբեռնվածությունը՝ մինչև 100 կգ:</p> | |  |
| 3 | Գրասենյակային բազկաթոռ | <p>Գրասենյակային անշարժ բազկաթոռ փայտե հիմնակմախքով՝ չորս ոտանի հաճարի ամուր փայտով, որը չպետք է ունենա ոստեր՝ ապահովելով ամրություն և հարթ տեսք: Աթոռի ոտքերը բրգաձև ձևավորում ունեն 35 սմ բարձրությամբ, վերևի մասում՝ նստատեղի մոտ, ոտքերը քառակուսի են՝ 5x5 սմ չափսերով, իսկ ներքևի մասում նեղանալով՝ դառնում են 3.5x3.5 սմ և սև ներկած, համահունչ բազմոցի գույնին: Հենակը և թիկնակը բաղկացած են մեկ ընդհանուր կորածև մասից (ԴՎՊ-ից և փայտից): Հենակի և թիկնակի բարձրությունը՝ 66-82սմ ($\pm 2\%$)՝ (հենակի հատվածը հատակից սկսած 66 սմ է և աստիճանաբար բարձրանում է մինչև թիկնակի վերին հատվածը դառնալով 82 սմ), նստատեղի բարձրությունը հատակից՝ 45 սմ ($\pm 2\%$), նստատեղի խորությունը՝ 50սմ ($\pm 2\%$): Բազկաթոռի ընդհանուր երկարությունը դրսից դուրս՝ 62 սմ ($\pm 2\%$), թևից-թև 49սմ ($\pm 2\%$), ոտքից-ոտք հեռավորությունը 47սմ ($\pm 2\%$): Բազմոցը ամբողջովին փափուկ՝ ոչ պակաս 7 սմ հաստությամբ և 28 խտությամբ սպունգով, պաստառապատված՝ բարձրորակ կաշվին փոխարինողով (էկոկաշի՝ տիտանիկ սև), որը ունի հատուկ գծավոր, բաժանված հատվածներ:</p> | 30 |  |

| | | | | |
|----------|--|--|----------|--|
| <p>4</p> | <p>Գրասենյակային բազմոց իր 2 բազկաթոռներով</p> | <p>Բազմոց Գրասենյակային անշարժ բազմոց փայտե հիմնակմախքով՝ չորս ոտանի հաճարի ամուր փայտով, որը չպետք է ունենա ոստեր՝ ապահովելով ամրություն և հարթ տեսք: Բազմոցի ոտքերը բրգաձև ձևավորում ունեն 35 սմ բարձրությամբ, վերևի մասում՝ նստատեղի մոտ, ոտքերը քառակուսի են՝ 5x5 սմ չափսերով, իսկ ներքևի մասում նեղանալով՝ դառնում են 3.5x3.5 սմ և սև ներկած, համահունչ բազմոցի գույնին: Հենակը և թիկնակը բաղկացած են մեկ ընդհանուր կորաձև մասից (ԴՎՊ-ից և փայտից): Հենակի և թիկնակի բարձրությունը՝ 66-82 սմ ($\pm 2\%$) (հենակի հատվածը հատակից սկսած 66 սմ է և աստիճանաբար բարձրանում է մինչև թիկնակի վերին հատվածը դառնալով 82 սմ), նստատեղի բարձրությունը հատակից՝ 45 սմ ($\pm 2\%$), նստատեղի խորությունը՝ 50սմ ($\pm 2\%$): Բազմոցի ընդհանուր երկարությունը դրսից դուրս՝ 120 սմ ($\pm 2\%$), թևից-թև 107 սմ ($\pm 2\%$), ոտքից-ոտք 116սմ ($\pm 2\%$): Բազմոցը ամբողջովին փափուկ՝ ոչ պակաս 7 սմ հաստությամբ և 28 խտությամբ սպունգով, պաստառապատված բարձրորակ կաշվին փոխարինողով (էկոկաշի՝ տիտանիկ սև), որը ունի հատուկ զծավոր, բաժանված հատվածներ:</p> <p>Բազկաթոռ Գրասենյակային անշարժ բազկաթոռ փայտե հիմնակմախքով՝ չորս ոտանի հաճարի ամուր փայտով, որը չպետք է ունենա ոստեր՝ ապահովելով ամրություն և հարթ տեսք: Աթոռի ոտքերը բրգաձև ձևավորում ունեն 35 սմ բարձրությամբ, վերևի մասում՝ նստատեղի մոտ, ոտքերը քառակուսի են՝ 5x5 սմ չափսերով, իսկ ներքևի մասում նեղանալով՝ դառնում են 3.5x3.5 սմ սև ներկած, համահունչ բազմոցի գույնին : Հենակը և թիկնակը բաղկացած են մեկ ընդհանուր կորաձև մասից (ԴՎՊ-ից և փայտից): Հենակի և թիկնակի բարձրությունը՝ 66-82 սմ ($\pm 2\%$) (հենակի հատվածը հատակից սկսած 66 սմ է և աստիճանաբար բարձրանում է մինչև թիկնակի վերին հատվածը դառնալով 82 սմ), նստատեղի բարձրությունը հատակից՝ 45 սմ ($\pm 2\%$), նստատեղի խորությունը՝ 50սմ ($\pm 2\%$): Բազկաթոռի ընդհանուր երկարությունը դրսից դուրս՝ 62 սմ ($\pm 2\%$), թևից-</p> | <p>2</p> |  |
|----------|--|--|----------|--|

| | | | | |
|---|-----------------------------|---|----|--|
| | | թև 49սմ ($\pm 2\%$), ոտքից-ոտք հեռավորությունը 47սմ ($\pm 2\%$) : Բազմոցը ամբողջովին փափուկ՝ ոչ պակաս 7 սմ հաստությամբ և 28 խտությամբ սպունգով, պաստառապատված՝ բարձրորակ կաշվին փոխարինողով (էկոկաշի՝ տիտանիկ սև), որը ունի հատուկ գծավոր, բաժանված հատվածներ: | | |
| 5 | Կախիչ | Կախիչ նախատեսված շորեր կախելու համար: Կախիչի նյութը մետաղական է: Բարձրությունը 180-185 սմ: Կախիչի թասիկի տրամագիծը պետք է լինի 40-45 սմ և այն պետք է լինի ծանր, որպեսզի ապահովի կայունություն և կանխի կախիչի շրջվելը վերարկուներ կախելուց հետո: Պետք է ունենա անձրևանոցի համար նախատեսված հարմարանք: Կախիչի վերնի հատվածում պետք է տեղադրված լինեն 8-10 կեռիկներ, որոնք ապահովում են հագուստի հարմարավետ կախման հնարավորություն: Գույնը սև: | 70 |  |
| 6 | Շարժական աթոռ միջին չափի | Բազկաթոռ գրասենյակային- նստատեղի խորությունը՝ 48 սմ ($\pm 2\%$), նստատեղի լայնությունը՝ 46սմ ($\pm 2\%$), մեջքի բարձրությունը նստատեղից՝ 52 սմ($\pm 2\%$), մեջքի լայնությունը՝ 45սմ($\pm 2\%$), նստատեղի բարձրությունը հատակից 52սմ($\pm 2\%$), ընդհանուր աթոռի բարձրությունը 100 սմ($\pm 2\%$), աթոռի լայնությունը 59 սմ($\pm 2\%$): Աթոռի հիմնակմախքը բաղկացած է ֆաներայից և պլաստմասե դետալներից: Մեջքը և նստատեղը բարձրորակ կտորե և ոչ պակաս 7 սմ հաստության սպունգով: Մեխանիզմը՝ մետաղական, պտտվելու, բարձրանալու և իջնելու հնարավորությամբ: Մոխրագույն, սև, կանաչ, նարնջագույն (նշված քանակության մեջ առանձին գույների քանակային չափերը ըստ պատվիրատուի պահանջի): | 20 |  |

| | | | | |
|---|---|---|----|--|
| 7 | <p>Բազկաթոռ՝ ղեկավարի Արմնկակալները՝ փայտից</p> | <p>Ղեկավարի աթոռ հռովակավոր հինգ թևանի, երկաթյա խաչուկով, երեսապատված փայտով, իջնող, ճոճվող մեխանիզմով: Արմնկակալները՝ բնական փայտե: Պաստառը՝ բնական կաշի: Նստատեղը և թիկնակը բարձր խտության՝ ոչ պակաս 10 սմ սպունգով: Նստատեղի չափսերը՝ 54x50սմ ($\pm 2\%$), թիկնակի լայնությունը 53սմ ($\pm 2\%$), նստատեղից թիկնակի վերին մասը՝ 75սմ ($\pm 2\%$): Նստատեղը և թիկնակը մեկ ընդհանուր 2 սմ հաստության ֆաներայով: Գլխի հատվածը՝ պաստառապատված, թիկնակից առանձին: Թիկնակը՝ փոռիկավոր տեսքով պաստառապատված: Քաշը՝ 19-21 կգ, գույնը սև: Առավելագույն ծանրաբեռնվածությունը 130 կգ: Երաշխիքային սպասարկում 1 տարի:</p> | 10 |  |
| 8 | <p>Բազկաթոռ՝ ղեկավարի</p> | <p>Հռովակավոր աթոռ՝ երկաթե հինգթևանի խաչուկով, բարձրացող իջնող, ճոճվող և մեկ աստիճանի վրա ֆիքսվող երկու ձողով մեխանիզմով: Ձողերից մեկը կարգավորում է բարձրությունը, իսկ մյուսը՝ աթոռի ճոճը և մեկ աստիճանի ֆիքսումը: Նստատեղը և մեջքը՝ մեկ ընդհանուր կտորից, առնվազն 9 սմ հաստության սպունգով, իսկ պաստառը բարձրակարգ կաշվին փոխարինող: Նստատեղի և թիկնակի սպունգի հաստությունը առնվազն 9 սմ, պաստառը էկո կաշի: Նստատեղի խորությունը մինչև մեջք՝ 50 սմ ($\pm 2\%$), լայնքը 53սմ ($\pm 2\%$): Արմնկակալները փափուկ առնվազն 5 սմ սպունգով երեսապատված բարձրակարգ կաշվին փոխարինողով, արմնկակալների միջև հեռավորությունը 63 սմ ($\pm 2\%$): Մեջքի բարձրությունը նստատեղի հատվածից 62 սմ ($\pm 2\%$), լայնքը ամենալայն հատվածում 50 սմ ($\pm 2\%$): Աթոռի ընդհանուր բարձրությունը մինչև մեջքի վերին հատված 104 սմ ($\pm 2\%$): Գույնը սև: Առավելագույն ծանրաբեռնվածությունը 130 կգ: Երաշխիքային սպասարկում 1 տարի:</p> | 5 |  |

| | | | | |
|---------------|-------------|--|---|---|
| 9 | Լրագրասեղան | <p>Լրագրասեղան՝ տրամագիծը 75 սմ($\pm 2\%$), բարձրությունը 55 սմ($\pm 2\%$), դեկորատիվ մետաղի պատի հաստությունը 1,5 մմ, ոտքերի և շրջանակի մետաղի ընդհանուր հաստությունը 2,2 մմ: Սեղանը պատրաստված է մետաղական կորացած մասերից, որոնցից սեղանի 4 ոտքերը կորացվում են ներքև և սկիզբ են առնում սեղանի եզրից, ապահովելով առավել կայունություն: Սեղանի վերին մակերեսի մետաղյա շրջանակը զարդարված է ծառի ճյուղերի դիզայնով: Երեսը թափանցիկ ապակի 6-8 մմ հաստությամբ, հղկված եզրերով: Սեղանի երկաթային մասերը պետք է լինեն սև ջերմային փոշեներկմամբ:</p> | 3 |  |
| Այլ պայմաններ | | <p>Երաշխիքի տրամադրում՝ 1 տարի: Ապրանքները պետք է մատակարարվի հավաքված և օգտագործման պատրաստ վիճակում: Մատակարարումը և բեռնաթափումը մինչև պատվիրատուի պահեստ՝ մատակարարի հաշվին: Ուղորդվել կից նկարներով:</p> | | |

ԳՆՈՐ

ՎԱՃԱՌՈՂ

 /ստորագրություն/
 Կ.Տ

 /ստորագրություն/
 Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|--------------------------------------|---|---|---|---------|------|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|----------|----------|-----------|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | Ընդամենը | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | | դեկտեմբեր |
| 1. | 39111140/6 | Աթոռ 2 ոտքով | | | | | | | | | | | | 100% | 100% |
| 2. | 39111140/7 | Աթոռ 4 ոտքով | | | | | | | | | | | | 100% | 100% |
| 3. | 39138310 | Գրասենյակային բազկաթոռ | | | | | | | | | | | | 100% | 100% |
| 4. | 39111230 | Գրասենյակային բազմոց իր 2 բազկաթոռներով | | | | | | | | | | | | 100% | 100% |
| 5. | 39132220 | Կախիչ | | | | | | | | | | | | 100% | 100% |
| 6. | 39111140/8 | Շարժական աթոռ միջին չափի | | | | | | | | | | | | 100% | 100% |
| 7. | 39111220 | Բազկաթոռ՝ դեկավարի արմնակալները՝ փայտից | | | | | | | | | | | | 100% | 100% |
| 8. | 39111220/1 | Բազկաթոռ՝ դեկավարի | | | | | | | | | | | | 100% | 100% |
| 9. | 39121400 | Լրագրասեղան | | | | | | | | | | | | 100% | 100% |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴԲԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին՝
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|-------------------------|---|--|---------|--|---------|-------------------------------------|--|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

Ռուդիկ Կարպետյան

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N_
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը _____ պայմանագրի համարը _____
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|-----------|----------------|---------------------|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն